



«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2020 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքուկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել Պատասխանների գրքուկի կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել բոլոր հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված տեքստը մի հատված է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելից: Ընթերցե՛ք այն և պատասխանե՛ք հարցերին:

Արայի և նրա մահվան մասին Շամիրամից՝ պատերազմի մեջ

Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը: Բայց այն վավաշոտ և անատակ Շամիրամը, շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ Նինոսի վախճանվելուց կամ Կրետե փախչելուց հետո, ինչպես համոզված էմ, Շամիրամն իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով, և շատ աղաչանքներով ու պարզների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ, և կա՛մ իրեն կին առնել ու բոլորի վրա թագավորել, կա՛մ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին, և Արան չհամաձայնեց, ապա Շամիրամը, սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո առնում է իր գորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայոց երկիրը՝ Արայի վրա, բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հալածել, որքան նվաճել կամ իր ձեռքը զգել, որպեսզի իր ցանկության կամքը կատարի. որովհետև մոլեգին ցանկությունից նա տռփանքով սիրահարվել էր Արայի մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ: Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ: Ճակատը պատրաստելիս նա իր գորապետերին պատվեր է տալիս, եթե դեպքը բերի, ջանալ կենդանի պահել Արային: Կովի ժամանակ Արայի գորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից:

- Հարց 1** Նշե՛ք առնվազն երկու հայ հեղինակի անուն, որ իրենց ստեղծագործության մեջ անդրադարձել են Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներին: (2 միավոր)
- Հարց 2** Ըստ տրված հատվածի՝ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել Արայի և Շամիրամի հարաբերությունները պատմության տեսանկյունից, այսինքն՝ ինչպիսի՞ն են եղել Հայաստան-Ասորեստան հարաբերությունները տվյալ ժամանակաշրջանում: (4 միավոր)
- Հարց 3** Ընտրե՛ք առասպելի երկու գլխավոր կերպարներից որևէ մեկին և գրե՛ք նրա անունից նամակ մյուսին (Շամիրամից Արային կամ Արայից Շամիրամին): Պահպանե՛ք նամակի ժանրային առանձնահատկությունները: Շարադրանքը պետք է լինի 80-100 բառի սահմանում: (4 միավոր)
- Հարց 4** Արա Գեղեցիկը մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հառնող աստծու մասին: Վերհիշելով առասպելի ամբողջ տեքստը՝ պատասխանե՛ք հարցերին:
 - ա.** Ներկայացրե՛ք, թե ինչ սյուժեով է այդ հավատալիքը դրսևորվում տեքստում: (3 միավոր)
 - բ.** Մովսես Խորենացին, ներկայացնելով հանդերձ հեթանոսական առասպելը, ինչպե՞ս է փորձում այն պատմականացնել: (3 միավոր)

Ձոն

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.

— Քեզի ընծա՛, իմ հայրենիք —

Սոսյաց անտառեն էի զայն կտրեր,

— Քեզի ընծա՛, հին հայրենիք —

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր,

Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.

— Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ —

Ան տարաշխարհիկ բույսի մ՛եր ծրդոտ...

— Ձեզի ընծա՛, հեզ պանդուխտներ —

Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.

Ընդ եղեգան փող ո՞րք ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն,

— Ձեզի ընծա՛, սուրի զոհեր —

Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն...

— Ձեզի ընծա՛, կրակի զոհեր —

Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.

Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.

— Քեզի ընծա՛, հայր ալեհեր —

Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...

— Քեզի ընծա՛, մայր կարեվեր —

Եղեգնյա գրչով օջախս երգեցի,

Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.

— Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ —

Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...

— Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ —

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.

Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

Հարց 1 Բնութագրե՛ք ձոնը որպես բանաստեղծության տեսակ: (1 միավոր)

Հարց 2 Դանիել Վարուժանի բանաստեղծական ո՞ր ժողովածուից է այս բանաստեղծությունը: (1 միավոր)

Հարց 3 Նշե՛ք Դանիել Վարուժանի չորս բանաստեղծական ժողովածուների վերնագրերը: (2 միավոր)

Հարց 4 Բանաստեղծությունից դու՛րս գրեք երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը: (3 միավոր)

Հարց 5 Որտեղի՞ց է Դանիել Վարուժանը վերցրել «Ընդ եղեգան փող» նախաբանով տողը, որ կրկնվում է ամբողջ բանաստեղծության մեջ: (1 միավոր)

Հարց 6 Ի՞նչ սկզբունքով է կառուցված «Ձոն» բանաստեղծությունը: Մեկնաբանե՛ք բանաստեղծական տների կապակցման եղանակը: (4 միավոր)

Հարց 7 Բացատրե՛ք 2-րդ և 5-րդ տների ավարտական տողերի («Ընդ եղեգան փող ո՞րք ելաներ» և «Ընդ եղեգան փող բոց ելաներ») կապը տվյալ բանաստեղծության համապատասխան տների բովանդակության հետ: (4 միավոր)